Funded by the European Union and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Implemented by the Council of Europe

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ (ԳԼԿ II) 2019-2022ԹԹ. ԾՐԱԳԻՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ և ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԶՈՐԱՑՈՒՄ

Ո՞րն է ծրագրի նպատակը

- Բարձրացնել հակակոռուպցիոն գործողությունների և ակտիվների վերադարձման արդյունավետությունը՝ խթանելով կոռուպցիայի դեմ պայքարը և կանխարգելումը Հայաստանում:

Ովքե՞ր են ծրագրի շահառուները

- Լայն հասարակությունը
- Արդարադատության նախարարությունը
- Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը
- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (որը պետք է ստեղծի Կառավարությունը)
- Քաղաքացիական ծառայության գրասենյակը
- Ոստիկանությունը
- Գլխավոր դատախազությունը
- Հայաստանի հատուկ քննչական ծառայությունը
- Հայաստանի քննչական կոմիտեն
- Դատական մարմինները
- Քաղաքացիական հասարակությունը

Ինչպե՞ս է իրականացվում ծրագիրը

- Քաղաքական/օրենսդրական և կարողությունների զարգացման միջոցառումների համադրմամբ, որոնք հատուկ մշակված են ակնկալվող նպատակներից յուրաքանչյուրի իրագործման համար:

Ի՞նչ արդյունք ենք ակնկալում

- Կոռուպցիայի դեմ պայքարի բարելավված օրենսդրական և ինստիտուցիոնալ շրջանակ՝ անկախ և արդյունավետ հակակոռուպցիոն մարմինների միջոցով:
- Հանրային պաշտոնյաների համար բոլոր մակարդակներում գույքի հայտարարագրման, շահերի բախման և ապօրինի հարստացման կանխման բարելավված համակարգ:
- Կոռուպցիայի հետ կապված հանցագործությունների և իրավախախտումների հետաքննության, նախաքննության և դատաքննության արդյունավետության բարձրացում:
- Ապօրինի ձեռքբերված գույքի բռնագանձման մեխանիզմների ինստիտուցիոնալ զարգացում:

Որքա՞ն է ծրագրի արժեքը

- Ընդհանուր բյուջեն կազմում է 850 000 եվրո։
- Ծրագիրը 80%-ով ֆինանսավորվում է ԵՄ-ի և 20%-ով՝ Եվրոպայի խորհրդի կողմից։ Ծրագիրն իրականացնում է Եվրոպայի խորհուրդը։

Որքա՞ն է ծրագրի տևողությունը

- Ծրագրի տևողությունն է 2019 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի օգոստոսի 31-ը։

Ինչպե՞ս ստանալ հավելյալ տեղեկություններ

- Ծրագիրն իրականացնում է Եվրոպայի խորհրդի Հանցավորության դեմ պայքարի բաժինը՝ Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների և համագործակցության իր բաժանմունքի միջոցով (Մարդու իրավունքների և օրենքի գերակայության հարցերով գլխավոր տնօրինություն)։

Կոնտակտային տվյալներ

Ծրագրի թիմը Ստրասբուրգում՝

- Մուսթաֆա Ֆերատի
  Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների և համագործակցության բաժանմունքի ղեկավար
  Էլ.փոստ՝ mustafa.ferati@coe.int
- Եվգենի Եվգենիև
  I-ին ստորաբաժանման ղեկավար
  Էլ.փոստ՝ evgeni.evgeniev@coe.int
- Դանա Իսսա
  Ծրագրի մենեջեր
  Էլ.փոստ՝ danae.issa@coe.int

Ծրագրի թիմը Երևանում՝

Ծրագրի ղեկավարի պաշտոնը համալրման փուլում է։

- ԳայանեՄաթևոսյան
  Ծրագրի օգնական
  Էլ.փոստ՝ gayane.matevosyan@coe.int

Սա երկկողմանի ծրագիր է Հայաստանի հետ, որն իրականացվում է «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագրի շրջանակներում (2-րդ փուլ կամ ԳԼԿ II)։

2014 թվականի ապրիլին Եվրոպական միությունը և Եվրոպայի խորհուրդը համաձայնել են, որ թիրախային համագործակցության միջոցառումները ԵՄ Արևելյան գործընկերության երկրների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության, Ուկրաինայի և Բելառուսի հետ կիրականացվեն «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագրի շրջանակներում։ Ծրագրի 1-ին փուլը (ԳԼԿ I) մեկնարկել է 2015 թվականին և ավարտվել 2018 թվականին։ Ծրագրի երկրորդ փուլը (ԳԼԿ II) մեկնարկել է 2019 թվականին և կտևի մինչև 2022 թվականի օգոստոս ամիսը։

Համագործակցության այս միջոցառումները կհզորացնեն Արևելյան գործընկերության երկրների կարողությունները, որոնք Եվրոպայի խորհրդի անդամ պետություններ են, բացառությամբ Բելառուսի՝ մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության ոլորտներում եվրոպական չափանիշներին ավելի սերտ հաղորդակից դարձնելուն միտված ներպետական բարեփոխումներ իրականացնելու նպատակով։